№ 140 Օգոստոսի 4 Զորեքշաբթի 1882 Օգոստոսի 4 Զորեքշաբթի № 140

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Նոր-Բայազէտից։ Նամակ Գանձակից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Եգիպտական հարց։ Նամակ Աւստրիայից։ Արտաքին լուրեր։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խամսայի Մէլիքութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

—

Յուլիսի 31-ին

Ամսոյս 25-ին այստեղի հայ թատրոնասէրների խումբը բարեգործական նպատակով մի ներկայացում տուեց հասկացնելով հասարակութեանը, թէ ստացվելու դրամը ուղարկվելու է ուսուցչական ժողովին։ Խաղացին «Բռնի ամուսնութիւն», «Երկու քաղցածներ» և «Կըռթ-կըռթ» կատակերգութիւնները մի մի արարուածով։ Ներկայացումը տրվեց հաշտարար դատարանի դահլիճում. դահլիճը լաւ լուսաւորված էր, բազմութիւն շատ խուռն էր, բայց ընդունելութիւնն անկանոն էր և մեծ մասը անկառավարութիւնից առանց տոմսակների ներս էին մտել. խաղը բաւականացուցիչ էր։ Մեր ժողովուրդը համակրում է թատրոնին և գործը այստեղ լաւ առաջ կերթայ, ինչպէս երևում է առած փորձերից, միայն թէ նախ՝ սիրողների խումբը այս կամ այն կուսակցութիւններին չը պատկանէր, և երկրորդ՝ եթէ օրիորդների ծնողները բարեհաճէին թողնել օրիորդներին դուրս գալ բեմը, իրանց մէջ ունեցած աւանդական յամառութիւնը հեռացնելով իրանցից։ Թատրոնից հաւաքված արդիւնքը հասաւ 47 ր. 50 կ. դումարի, որից ծախք 7 ր. 50 կ. դուրս գալով մնում է զուտ արդիւնք 40 ր., որը պէտք է ուղարկվէր ուսուցչական ժողովին։ Բայց տեղեկացանք, որ այդ փողերը դեռ չեն ուղարկվել և դերասանների մէջ մեծ աղմուկ է բարձրացել, որովհետև սոցա պարագլուխները կամենում էին ուրիշ նպատակի գործ ածել փողերը։

Այստեղ հեռագրատուն է վարձվում. հեռագրական սիները պատրաստվում են Ելենովկա գիւղից մինչև այստեղ. յոյս կայ, որ մինչև սեպտեմբերը աւարտվի։ Այստեղ Եկաւ և Նստարիստ պ. Պողոնդուպօլօ, վարձում է իր համար կայարան և զրաստեղակ իր գործը սկսելու համար։

Նոյնպէս բացվելու է մեզ մօտ և գիւղական դեղատուն (сельская аптека) կառավարութեան թոյլատրութեամբ։ Արդէն մօտ մի ամիս է, որ պրօվիզորը եկել է դեղատան կառավարիչ պ. Ա-զիզեանցի հետ պայմանաւորվելու համար, բայց դեղերը մինչև այժմ չը կան, նոյնպէս և դեղատունը դեռ ևս վարձված չէ։ Տեղիս հասարակութիւնը չէ կամենում դեղատունը իր հաշիւով վարձել, թէև դեղատան կառավարիչը օգուտ քաղելով իր բարեկամների պաշտպանութիւնից, կամենում է հասարակութեան վրա ձգել այդ ծախքերը, միայն հասարակութիւնը չէ համաձայնվում և դեռ հարցը վճռված չէ, որովհետև երկրագործ դասակարգը դեռ էգուց, կիրակի օրը, միայն կարող է գումարվել և խորհրդակցել այս առիթով։

Մեր գաւառը այս տարի շատ երաշտ է և անձրևների պակասութեան պատճառով արտերը լաւ չեն և սաստիկ չոքեր է անում։ Կիզիչ արևի տակ այրվող բոյսերը հետզհետէ դեղնելով, թառամում են։ Յորենի և գարու հունձը, ինչպէս երևում է, անյաջող կը լինի, թէև առ այժմ թանգութեան նշաններ դեռ ևս այնքան չեն տեսնվում։

Ս. Բատիկեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Յուլիսի 14-ին

Անշարժութիւն և գերեզմանական տխրութիւն, այս է Գանձակի ներկայ անխախանձելի պատկերը։ Բախտաւոր արարածները, ինտելիգենցիա կոչվածները, թողել են քաղաքը, գնացել են ամարանոցներում զուարճանալու։ Հինաւուրց հովանաւոր չինարիները, որոնց հովանու ներքոյ ճեմումէր մեր հասարակութիւնը, այսօր ակռաների ընակարան են դարձել. անմխիթար սօսիները առանց ջրի մնալով, թառամել են իրանց կանանչ զարդերից, մասամբ մարդկանց անտարբերութիւնից, մասամբ էլ անգութ ընութեան ապաշնորհութիւնից։ Ամբողջ երկու ամիս է, որ Գանձակում անձրև չէ գալիս, կարծես երկինքը խռովել է և պատժել է ուզում մեզ, մեր անտարբերութեան համար։ Պաշտօնական մարդիկ հովասուն ամարանոցում չեն յիշում Գանձակը, որ այրվում է անջուր. այրվում են այգիները, այրվում ու չորանում են պարտէզներ ու պտղատու ծառեր։ Բայց ոչ մէկի հոգը չէ այդ զգալի վնասը։ Ջրերի սղութիւնը չէ միայն, որ այրում է բոյս և տունկ, այլ մարդկանց կամայականութիւնն է և հարստահարութիւնը։ Պոլիցիան անտարբեր է կատարվող չարիքները խափանելու. քաղաքի բնակիչները քաղաքապետի առաջարկած մարդուն չընտրեցին ջրպետ, այլ խոհեմութիւն պահպանեցին, այս անգամ մի անշահասէր մարդ ընտրելով ջրպետ, որ երկպառակ գանձակեցոց դնէ կարգ կանոնի մէջ, հերթական դարձնելով ջուր բաժանել։ Որքան ուրախացան գանձակեցիք, սկզբից, որ քաղաքապետը այսուհետև հայ է լինելու, կարգադրացնի իրանց յոյսերը, բայց իզուր... Թուրքերի ջրպետը մի չահասէր մարդ է (նախկին՝ Թուրք քաղաքապետի փեսան է). սա օգուտ քաղելով հայերի անտարբերութիւնից, ամեն գիշեր կտրում է հայոց բաժին ջրերը և ծախում է նեմէցներին և Թուրքերին։ Երբեմն այնպէս կտրվում են հայոց ջրերը, որ ստիպված են լինում խմելու ջուրը՝ Թուրքերի կողմից տակառներով տանելու։ Հայոց ջրպետը չէ կարողանում առատութեամբ իր բաժին ջուրը ստանալ, որովհետև ամեն անգամ Թուրքերը զինաւորված 20 մինչև անգամ 40 մարդով հսկում են ջուր բաժանելու տեղը. հակառակ դէպքում, հրացաններով ու սրերով են հայերին փախցնում։ Այսպիսի հարստահարութեան ժամանակ դիմում են քաղաքապետին, որ օգնէ նորանց, բայց նա մերժում է հայոց խնդիրը, ասելով. «այսպիսի միջոցում չեմ կարող օգնել ձեզ, ես հայերից նեղացած եմ»... Ի՞նչու, որովհետև նրա մատնացոյց մարդու չեն ընտրել ջրպետ. և ինքն իրան իրաւունք է համարում կամայական կերպով ջուր չնորհել սորան նորան, երկպառակութիւն զցելով ամբոխի մէջ։ Գաղտնիքն այն է, որ ջրի սղութեան ժամանակ միշտ դեր են խաղում իր տոմսակները։ Ում որ տայ տոմսակ, անպատճառ իրաւունքը նորան է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Վարանդայից անցայ Տիզակի գաւառը, գնացի Տող բերդը։ Այս բերդում իշխում էին Մէլիք-Աւանեանները։ Տեսայ նրանց տոհմային գերեզմանատունը, տեսայ Մէլիք-Եգանի կիսաւեր պալատը, որի մէջ այժմ բնակվում է մի մահմեդական բէգ, որը այդ տոհմի կրօնափոխ եղած ժառանգներից մէկն է։

Այստեղ ինձ յաջողվեցաւ ձեռք բերել երկու բաւական հաստ հատորների մէջ ամփոփված զանազան պատմական գրվածքներ։ Այդ աշխատութեան հեղինակն է Գոիչ վանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանեանցը։ Եթէ մեր բոլոր վանքերի ծոյլ, հացկատակ վարդապետները հետևէին Առաքել վարդապետի օրինակին, և իրանց չրջապատող ժողովրդի ու պատմական տեղերի աւանդութիւնները հաւաքելով գրէին, դրանով աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէին մեր գրականութեանը, քան թէ իրանց աղօթքներով։

Առաքել վարդապետը, իրաւ է, իր պատմութեան մէջ ժամանակագրական կարգ չէ պահպանել, նիւթերը իրանց տեսակի համեմատ չէ դասաւորել, և նրա աշխատութիւնը աւելի մի անկապ հաւաքածու է, քան թէ պատմութիւն, այսու ամենայնիւ նրա գրքերը բովանդակում են իրանց մէջ թէև անմշակ, բայց բաւական առատ նիւթ պատմութեան համար։ Երկու հատորները բաղկացած են 75 ընդարձակ գլուխներից և 428 երեսներից։

Նրա նիւթերի մեծ մասը կարող էր ծառայել հայոց Այսմաւուրքին, քան թէ պատմութեան. օրինակ, հանդիպում են դրանց նման շատ գլուխներ. «Պատմութիւն հրաշից ուրումն աղքատի» —«Յաղագս մարդակերպ հարենաքար անուանեալ վիմին»—«Յաղագս հրաշագործ Զուղալու խաչին»—«Յաղագս ուրումն ազահ վաճառականի, թէ որպէս եղև այր կատարեալ ի ձեռն սատանայի»—և այսպիսի գլուխների մէջ յանկարծ «Պատմութիւն Լանկթամուրայ»—մի բոլորովին անայլայլ կտոր Լանկ-Թէյմուրի արշաւանքներից։

Առաքել վարդապետի երկու հատորների մէջ կան և այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իբրև աղբիւր Ղարաբաղի մէլիքների պատմութեան համար։ Այդ տեսակ գլուխներից բաւական ընդարձակ տեղ է բռնում Տիզակի Մէլիք-Աւանեանների մանրամասն պատմութիւնը, սկսեալ Մէլիք-Եգանից մինչև այդ տոհմի վերջին ժառանգները։ Յետոյ Վարանդայի Մէլիք-Շահնազար II-ի պատմութիւնը, նրա յարաբերութիւնները Շուշի բերդի խաների հետ։ Աղա-Մամատխանի վերջին արշաւանքը, նրա սպանվիլը Շուշի բերդում. Ղարաբաղի սովը և ժանտախտը Աղա-Մամատ-խանի արշաւանքներից յետոյ. ժողովրդի ցրիւ գալը դէպի զանազան կողմեր։ Կան և այնպիսի գլուխներ, որ նուիրված են ռուսաց զանազան գէներալների արշաւանքներին դէպի Ղարաբաղի կողմերը. դրանց մէջ հետաքրքիր են՝ իշխան Մադաթովի ճակատամարտը Շամքոր գետի և Գանձակի բերդի մօտ, գեներալ Կոտլարևսկու Լէնքօրանի և Ասլանդուզի կռիւները. իշխան Ցիցիանովի արշաւանքները,—այդ բոլորը թէև իրանց բովանդակութեան կողմից շատ հետաքրքիր են, բայց ժամանակագրական կարգով դասաւորված չեն։ Գրքերի մէջ պատահում են զանազան հին ձեռագրներից արտագրած յիշատակարաններ, նշանաւոր անձինքների չիրիմների տապանագրեր, Ղարաբաղի այլ և այլ վայրերի մասին ժողովրդի մէջ մնացած աւանդութիւններ և այլն։ Իսկ որ ամենից հետաքրքիրն է, դա է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանաւոր անցքերի մասին, սկսեալ 1721 թուականից մինչև 1813 թուականը։ Այդ ժամանակագրութիւնը, հեղինակի ասելով, դուրս է բերել նա մի ձեռագիր Մաշտոցից, որը գրված է եղել տէր-Գասպար քահանայի ձեռքով։

Ինձ հետ առնելով Առաքել վարդապետի գրքերը, հեռացայ Տող բերդից, մի օր այնտեղ մնալուց յետոյ։ Այստեղից գնացի Ամարասայ վանքը, իսկ յետոյ վերադարձայ կրկին Շուշի բերդը։

Եւ այսպէս ես անցայ Ղարաբաղի բոլոր հինգ գաւառները—Դիզակաստան, Ջրաբերդ, Խաչէն, Վարանդա և Տիզակ—որոնք մի ժամանակ կազմում էին Խամսայի հինգ մէլիքութիւնները։ Այդ ճանապարհորդութիւնը տեւեց երկու ամիս։ Որքան կարող էի, թէ բերանացի և թէ գրաւոր տեղեկութիւններ հաւաքեցի մէլիքների պատմութեան մասին։ Մի և նոյն անցքը ես պատմել էի տալիս զանազան անձինքների, համեմատում էի միմեանց հետ, ստուգում էի, յետոյ նշանակում էի իմ գրքի մէջ։

Ցայտնի բան է, միայն ժողովրդական աւանդութիւնների վրա հիմնվելով, շատ դժուար կը լինէր կազմել մի քանի դարերի շարունակ պատմութիւնը։ Ժողովուրդը շատ անգամ շփոթում է անցքերը, մէկի գործողութիւնը միւսին է վերագրում, և ամենադժուարինն այն է, որ ժամանակագրական և տոհմագրական ճշտութիւններ չէ պահպանում, պատմական իրողութիւնները տեղափոխում է կամ շատ առաջ և կամ շատ յետոյ։ Բացի դրանցից, ժողովուրդը ունի իր լեգենդները, իր իդէալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործութիւններ, որոնք նրանց կատարածը չէին կարող լինել։ Օրինակ, ինձ շատ անգամ պատահում էր նկատել, որ մի և նոյն պատմական իրողութիւնը ամեն մի գաւառի աւանդութիւնների մէջ ընծայում էին նոյն գաւառի մի յայտնի հերոսին, քանի որ այդ անձնաւորութիւնը չէր կարող այն գործը կատարած լինել, որովհետև կամ այն ժամանակ նա դեռ ծնված չէր, կամ վաղուց մեռած էր։ Բայց պատմական փաստը դարձեալ մնում է իբրև իրողութիւն, միայն հարկաւոր է նրա կատարող տէրը գտնել։

Այդ բոլոր խառնաշփոթութիւնները ստուգելու համար, և անցքերը, գործողութիւնները ու գործողները պատմական ճիշտ ձևի մէջ դասաւորելու համար, ես օգուտ եմ քաղել գրաւոր աղբիւրներից, որ ցոյց կը տամ յետոյ։ Իսկ որտեղ պակասել են ինձ գրաւոր աղբիւրները, ես հիմնվել եմ աւանդութիւնների վրա։

Պէտք է ասած, որ աւանդութիւնները Խամսայի մէլիքների պատմութեան ամենահարուստ մասն են կազմում։ Աւանդութիւնների հետ ես վարվել եմ նոյն կերպով, ինչպէս որ վարվում է բնագէտը մի հնադարեան անծանօթ կենդանու ոսկորների կոյտի հետ։ Ընդհանուր կենդանաբանական օրէնքներով նա գիտէ խառնված ոսկորների կտորները ջոկել միմեանցից, ամեն մի մասը իր պատշաճաւոր տեղը դնել, և այսպիսով կազմել մի ամբողջ կմախք։ Գուցէ անդամներից մի քանիսը կը պակասեն, բայց բնագէտը դարձեալ կարող է գաղափար ստանալ, թէ իր գիտած կենդանիների որ տեսակին էր պատկանում։

Իբրև գրաւոր աղբիւրներ, ես ի նկատի եմ ունեցել հետևեալ ձեռագիր, դեռ ևս չը տպված աշխատութիւնները.

1. Բաղդասար միտրօպօլիտի ժամանակագրութիւնը, որ գտայ ես Գանձասար գիւղում և որի մասին վերևում տեղեկութիւններ տուի։

2. Բաղդասար միտրօպօլիտի հրովարտակների, ֆիրմանների, կալուածագրերի, արձանագրութիւնների և զանազան պաշտօնական թղթերի հաւաքածուն, որ գտայ ես Շուշի բերդում և որի մասին վերևում տեղեկութիւններ տուի։

3. Առաքել վարդապետ Կոստանեանցի երկու հատոր հաւաքածուն, որ գտայ ես Տող բերդում և որի մասին վերևում տեղեկութիւն տուի։

4. Երկու տետրակներ, բաղկացած 84 երեսներից, քաղուածք է արած Միրզա-Ադիզօզալի պարսկերէն պատմութիւնից։ Այդ տետրակների մէջ բովանդակվում են հետևեալ գլուխները. I. «Որպիսութիւնք խանացն Գանձակայ». II. «Որպիսութիւնք խանացն Ղարաբաղու».—այդ գլխի մէջ խօսվում է Ղարաբաղի խաների ծագման մասին, Փանահ-խանի հետզհետէ զօրանալու մասին, թէ որպէս այդ խանը միանալով Վարանդայի իշխան Մէլիք-Շահնազարի հետ, հիմնեց Շուշի բերդը և նրա հետ միասին սկսեցին պատերազմել Խամսայի միւս մէլիքների և Շիրվանի խանի դէմ։ Նոյն գլխի մէջ պատմվում է Փանահ-խանի հիմնած Բայաթ և Շահբուլաղ բերդերի մասին, որ կործանեցին հայոց մէլիքները։ III. «Համառօտ պատմութիւն Խամսայի հինգ մէլիքութիւնների.—այդ գլխի մէջ խօսվում է (Տիզակի Մէլիք-Եգանի, Վարանդայի Մէլիք-Շահնազարեան-

ջուր տանելու, բայց վայ այն մարդուն, որ աղքատ է, անշուշտ նորա բոյս և տունկերը կը չորանան: Ամսոյս 11-ին հայերի մի մեծ խումբ ճարահատեալ գնացել էր ջրպետի հետ թուրքերից իրանց ջրի բաժին ստանալու. ներկայացել էր թուրք ջրպետը, զրահաւորված թուրքերի բազմութեան հետ. հայերը վիճել պահանջել էին իրենց իրաւունքը, բայց երկչոտ հայերին անարգարար փախցրել էին հրացաններով: Այժմ յուսահատված ժողովուրդը գնացել է ամարանոցում բողոքելու պ. Նահանգապետին. իսկ Նահանգապետը խոստացել է անշուշտ շնորհ բերել Գանձակ և վերջ տալ կատարվող չարիքներին: Այժմ բոլորի յոյսը պ. Նահանգապետի վրա է, որ վերջ տայ անկարգութիւններին, եթէ ոչ Գանձակը դրկանք շատ կը կրէ:

Սովորական մարդասպանութիւնները կրկնվում են. անցեալ օրը թուրքի մէկը գողունի ապրանքից սակաւ բաժին ստանալու աղագաւ բաղարի մէջ ըէվոլվերով սպանեց ընկերոջ. իսկ դորա հետեւեալ օրը ջուրը սակաւ ստանալու աղագաւ թուրքի մէկը հրացանով սպանեց մի այլ թուրքի:

Սարերից խողովակներով ջուր հանելու հարցը մոռաւ, չնորհիւ մեր հարուստների, որոնց քսակների բերանը բարի գործի համար կապված է:

Գանձակեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 31 յուլիսի

Մեր զպրոցական սիստեմայի միակողմանի և ծուռը ուղղութիւնը, մեր զպրոցների խստապահանջ և հազար ու մի առարկաներով ծանրաբեռնվող ապարդիւն ծրագիրները, կանոնաւոր և ճշմարիտ դաստիարակութեան, առողջ և խելացի մանկավարժական գաղափարների և մտքերի բացակայութիւնը և անգործադրութիւնը—այս բոլորը հաւաքված չարունակում են իրանց վնասակար և կործանիչ ներդործութիւնը մատաղ սերընդի վրա: Այնտեղ, որտեղ ներդաշնակ զուգակշիռ կերպով չեն աճում և զարգանում մարդուս հոգեկան և ֆիզիկական ոյժերը, այնտեղ որտեղ խախտված է մանկավարժութեան այդ ամենաէական և բնական պահանջը—հասկանալի է որ այնտեղ, այդպիսի զպրոցներում չէ կարող ուսումն արդիւնաւոր և բարերար հետեանքների հասնել: Մեր հասարակութեան մէջ տարածված և արմատացած չը լինելով ֆիզիկական դաստիարակութեան վերաբերութեամբ առողջ և խելացի մտքեր, մեր մանուկ սերունդը մեծ մասամբ զուրկ է մնում ընտանիքում, մինչև զպրոց մտնելը կանոնաւոր և անհրաժեշտ մարմնական կրթութեան խնամքից, իսկ այս պահանջը մեր զպրոցները փոխանակ վերոդրեալ մանկավարժական ամենագլխաւոր և էական պահանջի հիման վրա լրացնելու—նոքա աւելի ևս իրանց խստապահանջ ծրագիրներով, իրանց միակողմանի ուղղութիւնով, իրանց անողոք պահանջներով քակտում են կատարելապէս հոգեկան և մարմնական համաչափ կրթութեան ներդաշնակութիւնը, արտադրելով ֆիզիկապէս թուլացած, վատոյժ, տոկունութիւնից զուրկ, այլանդակ էակներ, որոնք կեանքի մէջ մտնում են ըստ մեծի մասին ապարդիւն, առանց շահվելու իրանց ուսումից, կաղէ կաղ քարշելով իրանց երկրաւոր կեանքը: Եթէ կանոնաւոր ֆիզիկական կրթութիւնը կանոր և էական պահանջ պէտք է ընդունել տղաների, ապա ոչքան առաւել անհրաժեշտ է դառնում նա իգական սեռի համար, որոնց քնքոյշ և թոյլ օրգանիզմը փչրվում է զպրոցական միակողմանի և ծանրաբեռն պարապմունքների տակ: Նայեցէք համբերութեամբ մեր ուսանող սերնդի վրա. բոլորը զժգոյն, վատոյժ, նիհարացած, դեղնութեան, թոքախտի և բարակացաւի մէջ ընկած, կայտառութեան և զուարճութեան նշոյլներից զրկված, անհանգիստ, տոկունութիւնից զուրկ, մտքերի մէջ խախուտ, տատանվող, կիսահոգի և կիսամարմին... Ի՞նչի հետեանքներ են արդեօք այս բոլորը. անտարակոյս այս հարցը երկու պատասխան չէ կարող ունենալ...

Իսկ մենք մեր բոլոր յոյսը դնում ենք մանուկ սերունդի, մարդկութեան ապագայ այդ ներկայացուցիչների վրա:—Այս տողերը գրելուց առաջ մի տխուր հանդիսական էի դիմադիմի եօթներորդ դասատան աշակերտուհու, օր. Մարիամ Շահվերդեանի թաղմանը, որը չափազանց աշխատութիւնից և զպրոցական ծայրայեղ պահանջներից և պարապմունքներից ընկել էր թոքախտի մէջ և զոհ գնաց 17 տարեկան ծաղիկ հասակում:—Հանգուցեալը ամենաժրաջան և աշխատասէր աշակերտուհիներից մէկն էր. և ամենայն տարի անխափան փոխելով դասատուները, արդէն մէկ տարուց յետոյ պէտք է աւարտէր իր դասընթացքը, և ահա նորա կազմուածքը չը դիմացաւ զպրոցական միակողմանի և սրտամաշ պարապմունքներին և թոքախտով կնքեց իր երկրաւոր բազմաչարչար կեանքը դերափթիթ հասակում: Ամենի աչքից արտասուք էր հոսում այս սրտաշարժ և տխրալի տեսարանից. երեք ճառերից, որոնք կարդացվեցան հանդուցեալի վրա, մանաւանդ զգացմունքով լի և սրտաշարժ էր նորա ընկերուհի օր. Սաթինիկ Զմչկեանի ճառը, որը այնպէս կսկծալի և սրտաճմլիկ ոգով նկարագրում էր հանդուցեալի մարտիրոսական կեանքը. հանգիստ ոսկրներիդ, նահատակ ուսման...

Կ. Թէմ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԽԱՐԿՕՎԻ համալսարանի պրոֆէսօր, բժշկապետ Շլթեանց ուղարկել է մեզ իր ուսումնական գրքերից մի քանիս: Ահա մեր ստացած բրոշիւրների վերնագիրները. „О температурѣ въ воспаленіи грудной плевы“—հրատարակված է Բօստովում 1875 թվին, „Къ вопросу объ иннерваціи гортани“ հրատարակված է Խարկովում 1877 թվին և „Практическое руководство къ ларингоскопіи животныхъ“ հրատարակված է Վիլնայում 1879 թվին: Սրանք բուն մասնագիտական բժշկական գրվածներ են, բայց պրոֆէսօր Շլթեանց ունի և ժողովրդական բժշկական գրվածներ, ինչպէս օրինակի համար «Новый путь для здоровья» կամ «Нужно-ли лечиться.» Այդ երկու վերջին գրվածները, որ մենք դժբաղդաբար դեռ չենք ստացել (գուցէ փոստումն են ուշացել) պ. Շլթեանց թոյլ է տալիս եթէ ցանկացող գտնվի, թարգմանել և հայերէն լեզուով: Ինչքան մեզ յայտնի է, Շլթեանց մեր հայ բժիշկներից առաջինն է որ ընտրել է ուսումնական ասպարէզը, դառնալով համալսարանի պրոֆէսօր, այն ինչ բոլոր մնացած հայ բժիշկները միմիայն պրակտիկայով են պարապել միշտ: Դա երևի աւելի ձեռնտու և շահաւէտ է, քան թէ նուիրել իրան ուսումնական ասպարէզին:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են: «Երաշտութեան պատճառով հացի գինը բարձրացաւ: Պուդը արժէ 1 ր. 30 կ.: Բոլորը սարսափում են մտածելով թէ ինչ հետեանքներ կարող է ունենալ երաշտութիւնը: Բայց այսօր, յուլիսի 22-ին, վերջապէս եկաւ վաղուց սպասված անձրևը:»

—

Նոյն տեղից մեզ գրում են: «Այս տարի եղեռնագործութեան կողմից բաւական հարուստ է մեր գաւառը: Անցեալ օր Թափարավան-չայ գետի մէջ գտնվեցաւ ջուրի մէջ դրած մի անյայտ մարդու դիակ: Ասում են որ, նշաններից եզրակացնելով, այդ մարդուն նախ խեղդել և ապա գցել են ջրի մէջ: Այժմ, ինչպէս լսում ենք, դա մի հրէայի մարմինն է, որ վաճառականութեամբ պարապելով զիւղերը շրջելիս է եղել և յանկարծակի անյայտացել է: Ցաւալի էր տեսնել զոհի դժբաղդ եղբօր աղիողորմ լացը և լսել նրա աղաղակները: Եթէ խիստ հետախուզութիւն լինէր, գուցէ կարելի էր գտնել անյայտ չարագործներին:»

—

Պ. Ա. Սարուխանեանց գրում է մեզ ԱՐԴՈՒԻՆԻՑ հետեւեալը: «Անցեալ չաբաթվայ նամակովս հաղորդած Ճորոխի մէջ թափված հեղեղատի մասին նոր տեղեկութիւններ ստացվեցան: Ցայտնվեցաւ որ այդ հեղեղատի մի մասը անվնաս կերպով քանդվել է և անհետացել: Այժմ կը մնայ միայն մի անադին քար, որի մօտով անցնում է ջուրը: Ուստի և հեղեղատը իր սպառնացող վտանգաւոր դիրքը կորուսած կարելի է համարել:»

—

Մեզ գրում են ԱՂԴԱՇԻՑ հետեւեալը: «Այս տեղի ոստիկանները չը կարողացան գտնել Բաղու-Թիֆլիսեան երկաթուղու Լիաք գիւղի կայարանի հրդեհ դցող չարագործներին, բայց նրանք գտնվեցան տեղիս հաշտարար դատաւոր պ. Եակուլովի եռանդոտ աշխատութեամբ: Չարագործները 5 հոգի թուրք աւազակներ են, որոնցից մինը բէկ է, իսկ չորսը հասարակ գիւղացիներ:»

—

Նոյն տեղից մեզ գրում են: «Այստեղի թուրքերը միշտ դանդատվում են մեզ Թիֆլիսում թուրքերէն լեզուով հրատարակվող «Զիա» լրագրից, որ այդ թերթը անճիշդ է հրատարակվում, մինչև անգամ ամիսը մի անգամ կանոնաւոր կերպով

ների, Խաչէնի Հասան-Ջալալեանների, Զրաբերդի Մէլիք-Աթամի և Մէլիք-Ալահվերդու և Թալիշի (Գիւլիստանի) Մէլիք-Բէգլարեանների մասին: IV. «Հանգամանք Փանահ-խանին ընդ Խամսայ մէլիքաց»—այդ գլխի մէջ խօսվում է Փանահ-խանի կռիւների մասին հայոց մէլիքների հետ: V. «Հիմնարկութիւն Շուշի բերդին».—այդ գլխի մէջ աւելի պարզ երևում է Մէլիք-Շահնազարի գործակցութիւնը Փանահ-խանի հետ ի վնաս Ղարաբաղի միւս մէլիքների: VI. «Կալանաւորութիւն Քէրիմ-խանին, Քազմ-խանին, Հէյդար-Ղուլի-խանին և ազատութիւն նոցա ի հաջի Զալալէն»—այդ գլխի մէջ խօսվում է վրաց Հերակլ իշխանի նենգաւոր արշաւանքի մասին դէպի Ղարաբաղի կողմերը և նրա պարտութեան մասին Հաջի Զելէբիից: VII. «Գալուստ աւշար Ֆաթալի-խանին ուխտեցւոյ ի վերայ Ղարաբաղայ և պատերազմ նորա».—այդ գլխի մէջ խօսվում է, թէ որպէս հայոց մէլիքները միանալով Ֆաթալի-խանի հետ, սկսեցին կռվել Փանահ-խանի հետ և ստիպեցրին նրան իր որդի Իբրահիմ-աղային (յետոյ Իբրահիմ-խան) պատանդ տալ, որին Ֆաթալի-խանը տարաւ Պարսկաստան: Յետոյ Փանահ-խանի իր որդու ազատութեան համար Պարսկաստան գնալը, այնտեղ մեռնելը և Իբրահիմ-խանի վերադարձը Ղարաբաղ, որպէս այդ երկրի պարսից կառավարութիւնից նշանակված կառավարիչ: VIII. «Որպիսութիւնք Իբրահիմ-խանին».—այդ գլխի մէջ պատմվում է Իբրահիմ-խանի զօրանալու մասին, Աղա-Մամադ-խանի առաջին արշաւանքի մասին, որը Շուշի բերդը պաշարելով և չը կարողանալով գրաւել, Մէլիք-Մէջլումի և Զաւատ-խանի առաջնորդութեամբ գնաց Թիֆլիսը աւերակ դարձրեց. կոմս Զուբովի արշաւանքը. Իբրահիմ-խանի և ուրիշ մի քանի խաների ռուսաց հպատակութիւն ընդունելը. Աւարիայի Օմար-խանի ասպատակութիւնը Վրաստանում. Հերակլի մահը և վրաց իշխանական գերդաստանի երկպառակութիւնները: IX. «Յաղագս կրկնակի դալստեան Աղա-Մամադ-շահին ի վերայ Ղարաբաղայ և զնալոյ Իբրահիմ-խանին ի Բալաքիան»—այդ գլխի մէջ պատմվում է Աղա-Մամադ-շահի Շուշի քերդում սպանվելու մանրամասնութիւնները: Հետեւեալ գլուխներում պատմվում է վրաց Հերակլ իշխանի մահը, Գիւրգիի յաջորդելը, Աւարիայի Օմար-խանի երկրորդ արշաւանքը դէպի Վրաստան, գեներալ Լազարևի յաղթութիւնը նրա դէմ. գեներալ Ցիցիանովի արշաւանքը և այլն: Միրզա-Ադիգօզալի պատմութիւնից քաղած վերոյիշեալ երկու տետրակները ես ստացել եմ Ղարաբաղի հոգ. իշխանութեան յաջորդ Կարապետ վարդապետ Այվազեանցից:

5. Սարգիս արք-եպիսկոպոս Ջալալեանցի «Պատմութիւն աշխարհին Աղուանից» կոչված անտիպ գրքոյկը: Այդ գրքոյկը, որ Ղարաբաղի մէլիքների պատմութեանն է վերաբերում, և հեղինակը չը գիտենք ինչու է նրան Աղուանից պատմութիւն կոչում, բովանդակում է իր մէջ հետեւեալ գլուխները. «Աւան իւզբաշի»—«Յաղագս գալստեան տաճկաց ի Ղարաբաղ»—«Գաղթումն Աւանայ ի Ռուսաստան»—«Վերաբնակութիւն մէլիք-Եսայիայ ի Սիւնեաց յԱրցախ»—«Յաղագս մէլիք-Եգանայ և գործոց նորա»—«Յաղագս պատերազմին խանին Փանահայ ընդ մէլիք Եգանայ»—«Դարձեալ վասն պատերազմին խանին Փանահայ ընդ մէլիք-Եգանայ»—«Յաղագս մէլիքութեան Եսայիայ և յաղագս պատերազմի նորին»—«Պատերազմ խանին Ղարադաղայ, որ է մասն Փայտակարանի, ընդ մէլիք-Եսայիայ»—«Տեղեկութիւն ի վերայ ազգին մէլիք-Շահնազարայ»—«Յաղագս պաշարելոյ մէլիքաց զբերդն Աւետարանոց»—«Յաղագս միաբանելոյ մէլիք-Շահնազարայ ընդ խանին Փանահայ և յաղագս պատերազմին հաջի-Զալաբիայ»—«Վասն հաստատութեան մէլիք-Միրզախանայ հայկաղնւոյ ի թուին հայոց ռ. մ. դ.»—«Յաղագս պատերազմին Զալաբիայ ընդ արքային վրաց Թամրազայ»—«Վասն պատերազմի խանին Ուրմոյ աւշար Ֆաթալի կոչեցելոյ ընդ խանին Փանահայ ի թուին ռ. մ. ժ.»—Յաղագս պատերազմին խանին Փանահայ ընդ մէլիք-Աղամայ ի թուին ռ. մ. գ.»—«Դարձեալ պատերազմ խանին Փանահայ ընդ մէլիք-Աղամայ»—«Ծագումն ազգին մէլիք-Յովսէփայ տիրապետողին Նահանգին Իգիրմիզօրդու (Գիւլիստանի) որ ի հնումն Դիւթական»—«Գաղթումն մէլիք-Աթամայ և մէլիք-Յովսէփայ ի Գանձակ»—«Յաղագս վերստին մարտի Իբրայիմ-խանին ընդ մէլիքաց հայոց»—«Մահ խանին Շահվերդւոյ և գաղթումն Մխիթարայ քալանթարին»—«Դարձ մէլիքաց ի հայրենիս»—«Յաղագս դիմելոյ մէլիքաց հայոց առանձին զբերութեամբ առ Կայսրուհին ռուսաց Եկատերինէ»—«Դաշնագիր մէլիքաց»—«Մահ Յովհաննէս կաթողիկոսին Հասան-Ջալալեանց»—«Յաղագս պատճառաց հակառակ աթոռոցն Գանձասարայ»—«Յաղագս գաղթելոյ մէլիք-Մէջլումայ և մէլիք-Աբովայ»—«Գալուստ Սարգիս միտրօպոլիտին ի Ղարաբաղայ ի Գանձակ»—«Արշաւանք մէլիքաց հայոց»—«Հարցումն Արզումանայ յումեմնէ ախունդէ»—«Յաղագս դարձի մէլիք-Աբովայ ի Ղարաբաղ»—«Գալուստ Աղա-Մամատ-խանին ի Ղարաբաղ»—Գալուստ Աղա-Մամատ-շահին ի Վիրս»—«Յաղագս գալստեան Զուբովայ յաշխարհն Աղուանից»—«Դարձ Զուբովայ ի Ռուսաստան»—«Պաշարումն քաղաքին Գանձակայ և մահ մէլիք-Մէջլումայ»—«Դարձ Աղա-Մամատ-շահին ի Ղարաբաղ և մահ նորա»—«Դարձ մէլիք-Աբովայ ի Բօլնիսէ հանդերձ բնակչօք»—«Յաղագս մեծ սովուն Արցախու և յաղագս գնալոյ մէլիք-Զումշուդայ առ Կայսրն ռուսաց»—ընդամենը 39 գլուխ: Մնացեալ 8 գլուխները վերաբերում են ռուսաց զանազան գեներալների արշաւանքներին: Գրքոյկը բաղկացած է 124 երեսներից: Սարգիս արք-եպիսկոպոսը, թէև ինքը չէ յայտնում, բայց իր պատմութիւնը կազմելու ժամանակ մեծ մասամբ օգուտ է քաղել վերև յիշած Միրզա-Ադիգօզալի պարսկերէն պատմութիւնից, իսկ մնացեալ մասը հաւաքել է աւանդութիւններից: Անցքերը ժամանակագրական կարգով չեն դասաւորված. տեղ-տեղ հանդիպում են տոհմագրական սխալներ, որոնցից իր հօր հայրն է դառնում, իսկ հարազատ եղբայրը հօրեղբայր և այլն: Ժամանակագրական թեականներ համարեա թէ չը կան: Այն տեղերում, որ քաղել է Միրզա-Ադիգօզալի պատմութիւնից, գործ է ածում հիջրէթի թեականները, որոնց շատերը չեն համապատասխանում իրանց ժամանակին: Ինչպէս Ղարաբաղի մէլիքների պատմութիւնը նա «Պատմութիւն աշխարհին Աղուանից» է կոչում, այնպէս էլ աշխարհագրական զանազան տեղերի անունները գործ է ածում հին պատմական ձևով, որոնց շատերը չեն համապատասխանում այժմեան տեղերին: Զարմանալու է, որ Մէլիք-Մէջլումին և Մէլիք-Աբովին Հայկ կամ Արամ չէ կոչում: Եւ միայն աչքի առաջ եմ ունեցել Սարգիս արք-եպիսկոպոսի գրքոյկը, բայց նրան չեմ հետեւել: Այդ գրքոյկը ես ստացայ պօլկօվնիկ Յ. Դ. Լազարևից:

6. Մի այլ տետրակ 16 մեծ երեսներից բաղկացած, կրում է այսպիսի վերնագիր «Ծագումն Ղարաբաղու մէլիքների» Սար. Վ. Ջալալեանցի, բովանդակում է իր մէջ միայն 4 գլուխներ: I. «Ծագումն ազգին մէլիք-Աթամայ տիրապետողին Նահանգին Զարաբերդու»—II. «Ծագումն ազգին մէլիք-Յովսէփայ տիրապետողին նահանգի Իգիրմիզօրդու, որ ի հնումն Դիւթական»—III. «Ծագումն ազգին մէլիք-Եգանայ տիրապետողին Նահանգին Տիղակու»—IV. «Ծագումն ազգին մէլիք-Շահնազարայ տիրապետողին Վարանդու:» Ստորագրած է. «Համառօտեալ զայս ի պատմութեանց (?) յինէն յօրինելոյ. Սարգիս վարդապետ Ջալալեանց»: Այդ փոքրիկ տետրակը աւելի ամփոփ է և աւելի խղճմտանքով մշակված է, քան Ջալալեանի վերև յիշած ընդարձակ պատմութիւնը: Այդ տետրակը ես ստացայ պ. Սեդրակ Տէր-Առաքելեանից:

7. Հին գրչագիր մատեանների յիշատակարաններից քաղած Ղարաբաղի մէլիքների վերաբերութեամբ արձանագրութիւններ, — եկեղեցիների, վանքերի, մէլիքների ամրոցների, նրանց տոհմային շիրիմների վրա գտնված արձանագրութիւններ,—մէլիքների ժառանգների կամ մասնաւոր անձինքների ձեռքում գտնված հրովարտակների, ֆիրմանների, կալուածագրերի և այլ պաշտօնական թղթերի օրինակներ,—մէլիքների անունով կաթողիկոսների կոնդակների և օրհնութեան թղթերի պատճէններ,—յիշեալ զօկումենտները, որքան յաջողվել է ինձ հաւաքել իմ ճանապարհորդութեան ժամանակ, ծառայել են ինձ որպէս գլխաւոր աղբիւր ժամանակագրութեան և մէլիքների տոհմային ճիւղագրութեան համար:

(Կը շարունակվի)

չէ դուրս գալիս և աւելի էլ անճիշդ կերպով է ուղարկվում բաժանորդներին։ Իսկ երբ որ մենք, հայերս, ստանում ենք «Մշակ» լրագրի համարները, մեր ծանօթ թուղթերը թափվում են մեզ վրա և հարց ու փորձ են անում նոր լուրերի մասին։ Մանաւանդ այս բոպէս թուղթերին չատ են հետաքրքրում եգիպտական անցքերը։»

—

Մի հայ-կաթոլիկ գրում է մեզ հետևեալը։ «Մենք կաթոլիկներս սկսեցինք կարդալ ձեր լրագիրը և համակրեցինք նրան անկեղծաբար, համակրեցինք, վասն զի տեսանք «Մշակի» մէջ հայի և ոչ թէ միայն լուսաւորչականի գործիք, ճանաչեցինք նրա մէջ մի օրգան, որ ընդհանուր ազգի իրական օգուտներ է պաշտպանում և ընդհանուր ազգի պակասութիւններ է չօչափում։ Այդ է պատճառը որ մեր դաւանակիցներն էլ ամենայն սիրով սկսեցին մասնակցել ձեր թերթին, թէ բաժանորդ դրվելով և թէ աշխատակցելով։ Եւ այդ տեսակների թիւը, հաւատացէք, հետզհետէ կաւելանայ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—

Անգլիական համայնքների ժողովի մէջ Չարլզ Դիլկի արած յայտնութիւնը, թէ ռուսաց հաւատարմատարը հրահանգ ստացաւ մասնակցել կոնֆերենցիայի նիստերին առաջվայ հիմունքների վրա, կատարելապէս ուղիղ է, գրում է „Голосъ“։ Այն անցքը, որի պատճառով անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնականը արաւ այդ յայտնութիւնը, յայտնի է ամբողջ Եւրոպային։ Ռուսաց կառավարութիւնը, գտնելով, որ Անգլիայի գործողութիւնները Եգիպտոսի մէջ աւելորդ են դարձնում կոնֆերենցիայի խորհրդակցութիւնները այդ երկրի մէջ հանգստութիւնը վերականգնելու մասին, որովհետև, ըստ երևոյթին, անգլիական կառավարութիւնը մտադիր է իր սեփական միջոցներով վերականգնել այդ հանգստութիւնը, յայտնեց, որ այսուհետև օգտակար է համարում մասնակցել միայն Սուէզի ջրանցքի պաշտպանութեան հարցի քննութեանը։ Լօնդօնի մէջ իսկոյն հասկացան դիպլոմատիական այդ քայլի միտքը և շտապեցին ներկայացնել բացատրութիւններ, որոնք ապացուցանում էին, որ Անգլիան ամենևին չէ ցանկանում միւս պետութիւններից անջատված գործել, այլ որ առաջվայ պէս ցանկանում է ստանալ Եւրոպայի հաւատարմատարի դերը։ Այդպիսով ռուսաց կառավարութիւնը հասաւ իր նպատակին և ռուսաց հաւատարմատարը ստացաւ այն հրահանգները, որոնց մասին խօսեց Չարլզ Դիլկ։

Ի նկատի առնելով քաղաքական այդ անցքի վախճանը, կարելի է ուրախանալ, որ նա տեղի ունեցաւ։ Լաւ նշան է, որ անգլիական կառավարութիւնը շտապեց ներկայացնել իր բացատրութիւնները։ Եգիպտոսի մէջ այժմ կատարված անցքերով ուղղակի հետաքրքրված չը լինելով, Ռուսաստանը նշանաւոր շահեր ունի Արևելքի մէջ և նրա համար մեծ նշանակութիւն ունի, որ այդ իրողութիւնը չը մոռանան այն պետութիւնները, որոնք այնպիսի դիրք ունեն, ինչպէս Անգլիան Թիւրքիայի վերաբերութեամբ։ Ռուսաստանի մասնակցութիւնը կոնֆերենցիային և ռուսաց կառավարութեան հայեացքների համաձայնութիւնը գերմանական և աւստրիական կառավարութիւնների հայեացքների հետ կարող էին անգլիական կառավարութեանը համոզմունքներ շնչել, որ ռուսաց կառավարութիւնը Եգիպտոսի մէջ ներկայումս կատարվող անցքերին նոյնքան անտարբեր է վերաբերվում, որքան գերմանական և աւստրիական կառավարութիւնները։ Այն արագութիւնը, որով անգլիական կառավարութիւնը ներկայացրեց իր բացատրութիւնները, ապացուցանում է, թէ Անգլիան ինչպիսի մեծ նշանակութիւն է տալիս Ռուսաստանի մասնակցութեանը կոնֆերենցիային։ Այդ հանգամանքը ուրախալի է հետևեալ պատճառներով։

Արևմտեան Եւրոպայի մէջ մի քանի ժամանակից Ռուսաստանի թշնամիները լուր են տարածում, իբր թէ Ռուսաստանը միացաւ այն պետութիւնների հետ, որոնք դաղտնի մաքառում են Անգլիայի դէմ Եգիպտական հարցի հողի վրա։ Անբաւականութիւն յարուցանել Անգլիայի և Ռուսաստանի մէջ, անհետացնել այն բարեկամական յարաբերութիւնները, որոնք տեղի ունեն այդ երկու պետութիւնների մէջ այն ժամանակից, ինչ անգլիական կառավարչական ղեկը Գլադստոնի ձեռքն է անցել, ձեռնտու կը լինի քաղաքական այն Նախագծերի համար, որոնց համեմատ ապագայում Բալկանեան թերակղզին Աւստրիայի ձեռքին կամ նրա տիրապետող ազդեցութեան տակ պէտք է լինի։ Այդ հանգամանքների պատճառով ցանկալի էր Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութիւնը Եգիպտական հարցի հողի վրա և այժմ արդէն առաջին քայլն արված է դէպի այդպիսի համաձայնութիւնը։ Լօնդօնի մէջ հասկացան, որ Ռուսաստանը անկարող է բաւականանալ այն ընդհանուր բացատրութիւններով, որոնց անգլիական քաղաքագէտները տալիս են կոնֆերենցիային մասնակցող միւս պետութիւններին։ Այդ փաստը կարող է բանակցութիւնների վերջակէտ լինել այն պայմանների մասին, որոնց հիման վրա Ռուսաստանը կը համաձայնվի անգլիացիների արշաւանքը Եգիպտոսի վրա իր արևելեան շահերի հակառակ չը համարել։ Այսպիսի բոպէում, երբ Անգլիայի և Թիւրքիայի մաքառումն կարելի է դառնում և երբ Ֆրանսիայի ներքին քաղաքականութեան պայմանները թոյլ չեն տալիս Անգլիային յոյս դնել հանրապետութեան օգնութեան վրա, մեծ նշանակութիւն ունի, որ Անգլիայի և Ռուսաստանի մէջ անհամաձայնութիւններ տեղի չունենան։

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՑԻՑ

—

Վիէննա, 28 յուլիսի

Ֆրանսիական «Դէբա» լրագիրը գրում է հետևեալը։ Ինչ որ էլ լինեն մեր ներքին խառնակութիւնները և ինչքան էլ սրանք զարմանալի և անակնկալ լինեն, մենք միշտ պարտաւորեալ ենք արտաքին դէպքերի ընթացքին հետևել։ Վերջին րոպէներում, երբ յայտնի եղաւ թէ, Անգլիան քայլ անելու որոշումը տուած է, Ցաճկաստանը, ընդհանուրի աչքի զարնող մի ձգտումով մղեալ, Եգիպտոսում կարգապահութիւնը վերահաստատելու համար իրան առաջարկուած միջամտութիւնը ընդունեց։ Մի մարդ չատ սակաւ ճանաչած պէտք է լինի Ցաճկաստանի քաղաքականութեան սովորական դարձած խորամանկութիւնը, և երևակայէ թէ Թրքին արած խոստումը իրականութեան հետևանք կունենայ։

Նախ Ցաճկաստանը խոստումը յետս կոչելով չը կատարելու մոլութեամբ արատաւորեալ է, որովհետև սուլթանը իմաց տալով որ իր ինքնակալութեան իրաւունքը Եգիպտոսում պիտի վերահաստատէ, առաջարկում է միանգամայն Անգլիային որ սա իրան, տեղ բաց անէ, և նաւատորմը, զօրքերը ետ քաշէ։

Նմանապէս մի մարդ չատ սակաւ պէտք է ճանաչած լինի Անգլիական քաղաքականութեան ձևը, և երևակայէ թէ Անգլիան կը տայ կարևորութիւն այդ մեռեալ առաջարկութեան։

Անգլիացիք իրանց հաստատ որոշումը տուին, կատարելապէս պատրաստուեցան, հրամանատարները նշանակեցին, պահեստի զօրքերը կանչեցին և մեկնեցան։ Իրանք էլ իրանց կողմից տաճկական կառավարութեան խիստ պայմաններ առաջարկեցին, և զեկուցին թէ սուլթանի մտադրութիւնները երբէք բացորոշ եղած չեն, նոյնպէս երբէք չը կարողացան գիտենալ թէ Թուրքը Արաբիին ճանաչում է իբրև դաշնակից թէ ապստամբ, մինչդեռ հարկաւոր է որ Եւրոպան այս կէտին վրա որոշ տեղեկութիւն ունենայ։

Անգլիական դեսպանը պահանջեց որ նախ քան Թուրք զօրքերի Եգիպտոս մեկնիլը, եթէ սրանք մեկնելու էին, սուլթանը մի յայտագիր հրատարակէ ծանուցանելով խեդիվին միակ տէր և իշխան և Արաբիին ապստամբ. սուլթանը մերժում է այս պահանջին պատասխանելու և դիւրաւ հասկացվում է թէ ինչ է նշանակում այդ դիմադրութիւնը։

Սկզբից ի վեր սուլթանը իբրև խալիֆ, իր ապստամբ հպատակին գաղտնի դաշնակիցը և սատիպեալ գործակիցն է։ Չը գիտենք ինչ կարժէ այդ մարդը, պատիւ թէ փող, մոլեռանդ մի մարդ է թէ հրոսախմբի մի պարագլուխ, վերջը պիտի տեսնենք, բայց մինչև հիմայ այդ մարդը անհաւատացեալների դէմ կրօնական մի դատ ներկայացնելու պաշտօնը ունեցաւ։

Նմանապէս լաւ չը գիտցուիր թէ անգլիացւոց գործիք դարձած մի փոխարքայի իշխանութիւնը վերահաստատելու համար սուլթանը եթէ ապստամբին դէմ զօրք ուղարկելու լինի, նոյն իսկ ապստամբին հետ չեն միանար միթէ. այն ժամանակ Անգլիան ինքզինքը կը գտնէ կրկնապատկեալ մի դիմադրութեան դէմ։

Սուլթանը կարծուածին չափ բացարձակ իշխանութեան տէր մի ինքնակալ չէ. նախ քան բանադրանք արձակելը ինքը պէտք ունի խորհուրդ հարցնելու իր սուրբ ժողովից։ Արդէն սուլթանը դանկէցութեան սպառնալիք էր ստացել, և Մէկկայի Շերիֆը իր տեղը պիտի դնէին, եթէ անհաւատացեալների կողմը բռնէր ընդդէմ իր սեպհական կրօնքին։ Ահա այս պատճառաւ այն բաւան, որ Կայիրէ ուղարկուած էր ապստամբների պարագլուխը զսպելու համար, փոխանակ ձերբակալելու, ապստամբին կուրծքը չքանչան կախելով բաւականացաւ։ Ուրեմն դժուար խնդիր չէ տակաց կառավարութեան բռնած ընթացքը իմանալ։ Թիւրքը ի ներքուստ Արաբիին ապստամբ չէ կարող ճանաչել, և անկարելի է վստահել որ օսմանեան կառավարութիւնը նոյն իսկ իր համակրած ապստամբութիւնը ընկճելու մէջ անկեղծ գործակցութիւն ունենայ։

Մեր Կ. Պոլսի թղթակիցը միթէ մեզ չէր ասում, դեռ երէկ, որ Այիա Սոֆիայի մեծ իմամը ամբիոնում բարձրացած, 'ի ներկայութիւն բազմաթիւ հաւատացելոց Արաբիին ջատագովութիւններ էր կարդում իբրև կրօնքի ջերմ պաշտպան։

Սէն գետի եղերքի վրա տակաւին դժուարաւ ենթադրում են թէ երկրիս վրա կրօնական հարցեր կան, և ազատամիտները կամ լաւ ևս լուսաւորեալ անձինք մարդկային սեռի մեծամասնութիւնը չեն կազմում։ Բայց և այնպէս այս պատմական տարրին պէտք է կարևորութիւն տալ և ահա այս ճշմարտութեան վրա յենլով մենք միշտ բողոքած ենք Թրքաց Եգիպտոս ստնելուն դէմ, այսինքն մահմետականաց ֆրանսիական Ափրիկէ մտնելու դէմ։

Ուրեմն մենք Անգլիայի զօրեղ գործունէութեան դէմ որ և է նախանձու կրքով զրգռուած չենք. ընդհակառակը բարեմաղթութիւններով նրան հետևում ենք։ Անգլիական կառավարութիւնը այժմ մեզանից աւելի ազատ է, ոչ միայն իր երկրին աշխարհագրական դրութեան պատճառով, բայց նաև կոնֆերանսի մէջ մտած ժամանակ որ և իցէ մի պայման ընդունել չուզելուն համար։ Նա միշտ գիտցաւ յայտնապէս պահել ինչ որ կը պատկանի Սուէզի ջրանցքին, գիտցաւ նաև պահել ստիպողական հարկերի պարագայները զոր կարելի է անվրէպ ձեռք բերել փոքր ինչ հաստատուն կամք ունենալով։

Անգլիայի արագ և առանձին գործելը, ինչպէս ասում են, չատ տերութեանց դժգոհութիւններ պատճառեց։ Միջամտութեան այն միջոցը, որ մենք ձեռք առնելու համար առաջարկում էինք և որ միայն ջրանցքի եղերքի վրա սահմանուած պիտի լինէր, ոչ ուրիշների համար օգտակար և ոչ էլ մեզ համար մեծաչուք կարող էր լինել, այնու հանդերձ չը պէտք է կարծել որ մեր ժուժկալութեամբը Անգլիայի հետ նուազ դաշնակից ենք։ Ճշմարտութիւնը այն տեղ է որ Անգլիան միայնակ գործելը նախամեծար է համարում, սա իր մաքին հիմն է զոր արտայայտած են իր ամենահմուտ և ամենազգաստ քաղաքագէտները։ Մանելով այս կերպարանաւոր ցոյցին մէջ, որ եւրոպական ներդաշնակութիւն է կոչվում, Անգլիան միշտ պահեց իր ելքի դուռը և դուրս ելնելու առիթը գտաւ, այսօր ասում է ուրիշ պետութեանց «ինձ հետ եկէք եթէ կը կամենաք. ապա թէ ոչ ես կը գնամ միայնակ։»

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ գործնական մինիստրութեան կազմվելու լուրը հաստատվում է։ Ասում են, որ Կոշերի, Ֆիրար, Մանի, Բիլլո և Ժորիզիբերի կը մնան իրանց պաշտօնների մէջ, իսկ Բերլինի դեսպան Կուրտէլ արտաքին գործերի մինիստր կը նշանակվի։ «Temps» լրագիրը ասում է, որ ապագայ մինիստրութիւնը պէտք է որոշէ իր քաղաքական դրութիւնը։

—Պաշտօնապէս յայտնված է որ ֆրանսիական նոր մինիստրութիւնը կազմված է հետևեալ կերպով։ Դիւկլերկ մինիստր նախագահ և արտաքին գործերի, Ֆալիէր՝ ներքին գործերի, Դէվէս՝ արդարութեան, Դիւվո՝ ժողովրդական լուսաւորութեան, Ֆիրար՝ ֆինանսների, Բիլլո՝ պատերազմական, Ժորեզիբերի՝ ծովային, Կոշերի՝ փոստաների, Մանի՝ երկրագործութեան, Պիէր-Լըզրան՝ վաճառականութեան և ժամանակաւոր մինիստր հասարակաց աշխատանքների, Դէվէլ՝ ներքին գործերի մինիստրի օգնական։

—«Köln. Zeitg.» լրագրին հեռագրում են Բերլինից որ Թիւրքիայի և Անգլիայի յարաբերութիւնները Եգիպտոսի գործի վերաբերութեամբ կարծես թէ խաղաղ կերպարանք են ստանում, այնպէս որ յոյս կայ թէ չուտով համաձայնութիւն կը կայանայ այդ երկու պետութիւնների մէջ։ Սուէզեան ջրանցքի հարցի մասին բանակցութիւնները դեռ ևս չարունակվում են։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 օգոստոսի։ „Московскій Листокъ“ լրագրի համարների հատով ծախելը արգելված է։ Պատիժների նոր կանոնադրութեան մէջ ենթադրված է մացնել յանցանքների նոր ձևեր. անբարեխիղճ և վտանգաւոր կառուցումն կամուրջների, ճանապարհների, նաւերի, նոյնպէս գանձարանի հետ ունեցած պայմանների անբարեխիղճ կատարումն գլխաւորապէս պատերազմական ժամանակներում։ Կովկասեան լեռնային բաժնի լեռնային ինժեներ Լիտեվսկի արձակված է ծառայութենից, պահպանելով պաշտօնական հագուստը։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 2 օգոստոսի։ Շաբաթ օր անգլիական զօրաբաժինը, որ զբաղված էր „Ցէկս“ ամրոցը առաջ գտնված ռազմամթերքների ոչնչացնելով, ենթարկվեցաւ թշնամու յարձակմանը և ստիպված էր յետ քաշվել կորուստներով։ Եգիպտական զօրքերը նշանաւոր ոյժերով սպառնում են Սուէզի ջրանցքին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 50½ կ., չորրորդ 90 ր. 12½ կ., հինգերորդ 90 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 214 ր. 50 կ., երկրորդ 212 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 50½ կ., երկրորդ 89 ր. 50 կ., երրորդ 89 ր. 75 կ., ոսկի 8 ր. 23 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,05 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 253 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԸՆՏԱՆԻՔ առաջիկայ սեպտեմբերից յանձն է առնում **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ** բնակարան և **ԿԵՐԱԿՈՒՐ** տալ բաւական ձեռնտու պայմաններով: **ԴԱՍԵՐԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ** համար առանձին պայմաններ: Վարձի մասին կարելի է տեղեկութիւն ստանալ **Գ. ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՑ** իր **ՏՊԱՐԱՆՈՒՄ**, փոստատան ետևի փողոցի վրա:

1—8

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՑԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՌԻ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկօլադ Ֆրայ, Շեֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՌԻ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ Վերլի, ԹԱՄԲԵՐ Բալներիի, կօլմանի նրշրշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի կես գնով: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100:

15—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՆՈՐ ԳՐՔՈՅԿ

„ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ“

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ընթերցասէր մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Ղ. ԱՂԱԵԱՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրագրական խանութում: Գինն է 20 կոպ. օտար տեղերից դիմում են հետևեալ հասցեով: Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

4—25

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

издаваемый въ г. Тифлисѣ

(годъ второй)

Открыта полугодовая подписка на журналъ съ 1 іюля 1882 г. по 1 января 1883 года. Цѣна за полгода 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣсяца 3 р. 20 к., на 1 мѣсяцъ 1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года.

Полугодовые подписчики могутъ вносить при подпискѣ 3 р. и черезъ мѣсяцъ еще 3 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ въ администраціи журнала Сололакская улица д. № 10 и въ Москвѣ и въ С.-Петербургѣ въ книжнихъ магазинахъ И. П. Анисимова.

3—10

Ի. Ա. ՄԷԼԻՔ-ԲԷԳԼԵԱՐՕՎԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՌԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԷՋ (Թիֆլիս, Բարօնսկայա փողոց, տուն Կարաեվ № 10): **ԼՐԱՑՈՒՑԻՉ** և սկզբնական **ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ** կը սկսվեն օգոստոսի 23-ից, իսկ **ՈՒՍՈՒՄԸ** սեպտեմբերի 1-ից:

1—3 (1)

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցեով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ԿԷՍԻՑ

ԿԸ ՍԿՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENT

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուռնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Orient“ (Արևելք) թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կես տարվանը 4 րուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջի փողոց, կաթօլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Միքայէլ Տէր-Նիկողոսեանց

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվօլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ռէվօլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլնէմի. կօֆէ էլնէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դույթուկ (пухъ), պադնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու Ֆրաժէ, Վարշավի և Բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չումիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ Վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալստուկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գալանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՕՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ ապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցեով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

106—180

Միքայէլ Տէր-Նիկողոսեանց

Միջի փողոց, կաթօլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ

ց1-ն Օգոստոսի 1882

ՊԱՀԱՆՋՔ

1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)		48,976—93
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկայի բաժնում		1,039—17
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ		2,761,627—05
4. Փոխառութիւն գրաւականով՝		
ա) Պետութիւնից ապահովեալ տոկոսաբեր թղթերի	1,264,311—03	
բ) » ոչ » » »	495,160	
գ) Ապրանքների	24,800	1,784,271—03
5. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր		92,286—98
6. Թղթակիցներ՝		
ա) Նոցա հաշիւ (Loro)	1,024,512—42	
բ) Բանկայի հաշիւ (Nostro)	1,837,484—24	2,861,996—66
7. Բողոքուած մուրհակներ		11,269—80
8. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ		14,945
9. Ընթացիկ ծախսեր		28,673—10
10. Կահկարասիք և սկզբնական ծախսեր		6,240—92
11. Ցետ ստացուելիք ծախսեր		7,904—30
12. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր		9,314—94
		Ր. Ա. 7,628,545—88.

ՊԱՐՏՔ

1. Հիմնական դրամագլուխ		500,000
2. Պահեստի դրամագլուխ		51,000—75
3. Աւանդներ՝		
ա) Պայմանաժամով		1,971,558—94
բ) ց'Պահանջ		472,619—56
գ) Ընթացիկ հաշուով		574,741—43
4. Փոխառութիւն Թիֆլիսի Պետական Բանկայի բաժնից զեղջեալ մուրհակներով		287,493—50
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ Թիֆլիսի Պետական Բանկայի բաժնումը, ապահովեալ մուրհակներով և տոկոսաբեր թղթերով		536,693—10
6. Թղթակիցներ՝		
ա) Նոցա հաշիւը (Loro)	868,815—51	
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	2,093,342—44	2,962,157—95
7. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրոնների բաշխը 1880 և 1881 թ.		471—60
8. Չը վճարուած տոկոսներ աւանդներու ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց		84,037—08
9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ		178,695—94
10. Փոխանցիկ գումարներ		9,076—03
		Ր. Ա. 7,628,545—88.

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Августа 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.